## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

### ԿԸ ՍԻՐԵՍ ԶԻՍ

*«Կը սիրե՞ս զիս», հարցուց Յիսուս Պետրոսի,*
*Որուն ցըրուած երազներուն կըսկիծէն՝*
*Իր զարթումի յոյլ վայրկեաններն կը հեծեն.*
*— Այո՛, գիտես թէ կը սիրեմ ըզքեզ, Տէր.*
*Յորչաթ դողդոջ իմ այս շուրթե՛ըս խօսին,*
*Յորչափ ծովուն այս ալիքնե՛ըը հոսին...*
*Քո՛ւկդ են բոլոր մեր տենչանքներն եւ ուխտեր։*

*«Կը սիրե՞ս զիս», հարցուց դարձեալ Տէրն իրեն,*
*Ու Պետրոսի փըղձկումներէն կաթեցան*
*Աղի շիթեր վիմատառած ու անձայն.*
*— Այո՛, գիտես թէ կը սիրեմ ըզքեզ, Տէր.*
*Յորչափ աղիքս գութ ունենան ու սիրեն,*
*Յորչափ խութերն այս խորքերուն մէջ տիրեն...*
*Քո՛ւկդ են բոլոր մեր պաշտումներն ու վիշտեր։*

*«Կը սիրե՞ս զիս», երեքկնեց Տէրն, ու Կեփաս*
*Ամպի մը պէս խռոված՝ ըզգաց ներսիդին*
*Ուրացումի ահեղ անկո՛ւմը շանթին.*
*— Ա՛հ, գիտես Դու, գիտես ամէն ինչ, ո՛վ Տէր,*
*Թէ կը սիրեմ ըզքեզ, ցորչափ սէրդ անհաս*
*Ճառագայթի մը քաղցրութեամբ թափի վրաս...*
*Քո՛ւկդ են բոլոր մեր հոգիներն ու սիրտեր։*

*— Գնա՛ արածել իմ ոչխարներս, եւ դու ինք,*
*Հովիւ եղած, ա՛ռ քեզի հետ ցուպ ու սրինգ,*
*Մինչեւ այն օրն՝ ուր իյնայ ցուպդ ի գետին,*
*Եւ ուրիշներ կապեն մէջքիդ թոյլ գօտին,*
*Մինչեւ այն օրն՝ ուր քու սրի՛նգըդ մաշած*
*Ա՛լ չարձակէ այրումի ե՛րգ մը կամ լաց...*
*Գնա՛ արածել իմ ոչխարներս անձանձիր,*
*Ու ա՛յս է վարձքդ՝ եթէ զիս շա՛տ սիրեցիր։*

**ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ**

***1904***

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

### ԽԱՉԸ

Թէ պաշտումի թափն ունենաս՝
Տէրն զոյգ մը թեւ քեզի կուտայ,
Որպէս զի Իր Ուժը անհաս
Սաւառնացնես երկրի վրայ։

Թէ տեսիլներ ունենաս դուն՝
Յայտնութիւն մ՚ալ քեզի կուտայ,
Որպէս զի Ի՛ր Կամքը արթուն
Հանդիսացնես երկրի վրայ։

Թէ բարձունքէ մ՚խօսիս իր հետ՝
Ինքը քեզի շե՛շտ մը կուտայ,
Որպէս զի Իր Խօսքը յաւէտ
Արձագանգես երկրի վրայ։

Թէ վերացած յառիս իրեն՝
Հո՛ւր լեզու մ՚ալ քեզի կուտայ,
Որպէս զի Իր Կայծը վերէն
Սահեցընես երկրի վրայ։

Եթէ մըտնես իր ամպին մէջ՝
Ինքը քեզի շանթ մը կուտայ,
Որպէս զի Իր Վրէժը անշէջ
Փայլատակես եկրի վրայ։

Իսկ իր լոյսին թէ երթաս մօտ՝
Ինքը քեզի ջահ մը կուտայ,
Որպէս զի Իր Փառքն անաղօտ
Վարդավառես երկրի վրայ։

Եթէ նետուիս իր գիրկն անուշ՝
Ինքը քեզի երգ մը կուտայ,
Որպէս զի Իր Շնորհն երկնայուշ
Թըրթռացընես երկրի վրայ։

Թէ համբուրուիս հետ իր վէրքին՝
Ինքը քեզի կեանք մը կուտայ,
Որպէս զի Իր Շունչը անգին
Ոգեւորես երկրի վրայ։

Իսկ թէ թաղուիս իր շուքին տակ՝
Ինքը քեզի շող մը կուտայ,
Ոչինչին դէմ յոյսին անփակ
Ճառագա՛յթը երկրի վրայ։

Ու այդ Ուժը, այ Կամքն ու Խօսք
Այդ կայծն ու Վրէժ, այդ Փառքը սոսկ,
Այդ Շնորհն ու Շունչ, այդ Յոյսն համայն
Քեզի տըրուած ԽԱՉՆ է միայն։

**ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ**

***1905***